

ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ՆՈՅԵՄԲԵՐ 2025

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-334-Ն (ընդունված՝ 24.10.2025թ., ուժի մեջ՝ 12.11.2025թ.)

- Հետայսու յուրաքանչյուր անձ, այդ թվում՝ սպառող, կարող է մատուցել էլեկտրամոբիլների լիցքավորման ծառայություն, որն էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ չէ: Նախատեսվում է նաև, որ սպառողին մատակարարված էլեկտրական էներգիան վերջինիս կողմից կարող է սպառվել նաև սպառման համակարգի տեղակայման տարածքից դուրս գտնվող և իրեն պատկանող ավտոկայանատեղիում ու որպես ինքնուրույն գույքային միավոր գրանցված բնակելի նշանակության այլ տարածքում, որի սպառման համակարգի միացումն սպառողի սպառման համակարգին իրականացվում է սպառողի կողմից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՕ-382-Ն, ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-383-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Նախատեսվում է ակցիզային դրոշմանիշերով կամ դրոշմապիտակներով կամ հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքներ օտարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված պատասխանատվության շրջանակներում որոշակիացնել խախտում համարվող արարքները և ավելացնել գործող տուգանքների չափերը: Նախատեսվում է նաև վարչական իրավախախտման անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում: Սահմանվում է նաև քրեական պատասխանատվություն իրացման նպատակով կեղծ հսկիչ նշաններ պատրաստելու, պահելու, տեղափոխելու, առաքելու, ձեռք բերելու կամ դրանք օգտագործելու կամ իրացնելու համար:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-342-Ն (ընդունված՝ 22.10.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Նախատեսվում է, որ 2026 թվականի հունվարի 1-ից հետո ներկայացված կամ կազմված բոլոր փաստաթղթերը պահվում են միայն էլեկտրոնային եղանակով վարվող կադաստրային գործերում:
- Սահմանվում է, որ պետական գրանցման վարույթի հարուցման հիմք է հանդիսանում իրավունքի պետական գրանցում հայցող գրանցման սուբյեկտի ներկայացրած դիմումը, որը ներկայացվում է անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ դիմումը կարող է ներկայացվել նաև սպասարկման գրասենյակ: Դիմումը և կից փաստաթղթերը տեսաներածվում և մուտքագրվում են էլեկտրոնային համակարգ: Դիմումի մուտքագրումից հետո դիմողին տրամադրվում է արագ արձագանքման կողմ (ՕՐ) պարունակող դիմումի ընդունման վերաբերյալ քաղվածք:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-338-Ն (ընդունված՝ 22.10.2025թ., ուժի մեջ՝ 12.11.2025թ.)

- Սահմանվում է լաբորատոր գործունեություն իրականացնող կազմակերպությունների ռեեստր հասկացությունը և ամրագրվում է որակի կառավարման համակարգի ներդրման համապատասխանությունը գնահատելու առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունը: Նաև, սահմանված ժամկետում լաբորատոր գործունեություն իրականացնող կազմակերպությունում որակի կառավարման համակարգ ներդրված չլինելու դեպքում կազմակերպության լաբորատոր-ախտորոշիչ տեսակով բժշկական օգնության և սպասարկման լիցենզիայի գործողությունը կասեցվելու է:

«Լեզվի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-332-Ն (ընդունված՝ 24.10.2025թ., ուժի մեջ՝ 12.11.2025թ.)

- Նախատեսվում է, որ պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ կիրառվող թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկումը իրականացնում է կանոնարկման հանձնաժողովը:

Գնումների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-336-Ն (ընդունված՝ 24.10.2025թ., ուժի մեջ՝ 12.11.2025թ.)

- Գնումների բաժանման կամ խմբավորման և գնման առարկայի բնութագրերի փոփոխման անթույլատրելիության կարգավորման շրջանակներում կարգելվի ոչ միայն մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների, այլ նաև փոփոխել գնման առարկան, խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-341-Ն (ընդունված՝ 22.10.2025թ., ուժի մեջ՝ 15.11.2025թ.)

- Նախատեսվում է, որ գյուղատնտեսական նշանակության հողերից արոտավայրերի վարձակալության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 25 տարի ժամկետով՝ սոցիալական կամ բարեգործական կամ կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր (այդ թվում՝ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագիր) իրականացնելու նպատակով: Վերոնշյալ ծրագրերի իրականացման նպատակով գյուղատնտեսական նշանակության հողերից արոտավայրերը վարձակալության իրավունքով տրամադրվելու պարագայում վարձակալը պարտավոր է օգտագործել ըստ նպատակային և գործառնական նշանակության:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-343-Ն (ընդունված՝ 22.10.2025թ., ուժի մեջ՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո)

- Նախատեսվում է, որ պետական կազմակերպությունները անշարժ գույքը կվարձակալեն պետությունից անհատույց օգտագործման փոխարեն: Պետական կազմակերպությունն իրավունք չունի իրեն հանձնված կամ վարձակալությամբ տրամադրված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՕ-350-Ն (ընդունված՝ 22.10.2025թ., ուժի մեջ՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից)

- Փոփոխությամբ կապահովվի էլեկտրոնային համակարգի ամբողջական կիրառելիությունը՝ դատարանների կողմից անշարժ գույքի նկատմամբ սահմանափակումներ կիրառելու կամ վերացնելու վերաբերյալ կայացված ակտերը նույնպես էլեկտրոնային եղանակով անշարժ գույքի պետական ռեգիստրին ներկայացնելու միջոցով:
- Սահմանվում է, որ անշարժ գույքի նկատմամբ կամ դրա կապակցությամբ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը դատարանն առանց կատարողական թերթը հարկադիր կատարման ուղարկելու անշարժ գույքի պետական ռեգիստր է ուղարկում էլեկտրոնային եղանակով, իսկ Վարչական դատարանն անշարժ գույքի վերաբերյալ անշարժ գույքի պետական ռեգիստրի կայացրած վարչական ակտի կատարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնելու, ինչպես նաև այդ որոշումը փոխելու կամ վերացնելու վերաբերյալ որոշումներն անշարժ գույքի պետական ռեգիստր ուղարկում է էլեկտրոնային եղանակով:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-335-Ն (ընդունված՝ 24.10.2025թ., ուժի մեջ՝ 12.11.2025թ.)

- Նախատեսվում է, որ դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև դատավորի և ԲԴԽ անդամի լիազորությունները դադարեցնելու, իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և ԲԴԽ անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին ԲԴԽ որոշումներն ընդունվում են այսուհետ Բարձագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ):

«Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-337-Ն (ընդունված՝ 24.10.2025թ., ուժի մեջ՝ 21.11.2025թ.)

- Սահմանվում է, որ Դատական դեպարտամենտի ղեկավարի և առանձնացված ստորաբաժանման ղեկավարի պաշտոնին նշանակվելու համար բավարար կլինի միայն իրավագիտության բակալավրի կամ միայն իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճանի առկայությունը:

«Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-374-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 12.12.2025թ.)

- Օրենսդրական փոփոխությունների նպատակն է ՀՀ չափումների միասնականության ապահովման բնագավառում համապատասխան կարգավորումների հստակեցումը, բնագավառի արդիականացումը: Օրենքով սահմանվել են մի շարք նոր հասակցություններ, չափաժրարված արտադրանքի նկատմամբ չափագիտական և դրանց շուկայահանման պահանջներ, որպես չափիչ անոթ օգտագործվող շշերին ներկայացվող չափագիտական և դրանց շուկայահանման պահանջներ, ոչ ավտոմատ գործողության կշռող սարքերին ներկայացվող պահանջները և դրանց շուկայահանման կարգը, ազգային և աշխատանքային չափանմուշներին ներկայացվող պահանջների հստակեցում, Չափագիտության լիազոր մարմինն և ազգային մարմինն վերապահված գործառույթների հստակեցում և այլն:

«Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-333-Ն (ընդունված՝ 22.10.2025թ., ուժի մեջ՝ 21.11.2025թ.)

- Սահմանվում է, որ Արդարադատության ակադեմիայի ղեկավարը ակադեմիայում դասավանդման գործընթացին ներգրավված անձանց հետ բացի քաղաքացիաիրավական պայմանագրերից կարող է կնքել է նաև աշխատանքային պայմանագրեր: Նաև, վերապատրաստման վայրից դուրս մշտապես բնակվող ունկնդիրների համար Ակադեմիան հնարավորության դեպքում կկազմակերպի նրանց բնակության ապահովումը:

ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՕ-378-Ն (13.11.2025թ., ուժի մեջ՝ 14.12.2025թ.)

- Այսուհետ քրեական պատասխանատվություն է նախատեսվում բուժաշխատողի մասնագիտական, ինչպես նաև ոչ մասնագիտական օժանդակող գործունեությունը խոչընդոտելու համար: Որպես ծանրացնող հանգամանք նախատեսվում է պատասխանատվություն այն դեպքերի համար, երբ արարքը կատարվել է բուժաշխատողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ բռնություն գործադրելով:

«Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-370-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 03.12.2025թ.), «Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-371-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 03.12.2025թ.)

- Սահմանվում է Հարկային մարմնի և մաքսային մարմնի հանրային ծառայողների կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների ու զենքի կիրառման հիմքերը, պայմանները: Հանրային ծառայողներն իրավունք կունենան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով կիրառել ֆիզիկական ուժ, ինչպես նաև զենք ու հատուկ միջոցներ:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՕ-377-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 04.12.2025թ.)

- Փոփոխությունների նպատակն է ՀՀ հարկային օրենսգրքում վերանայել ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից աշխատուժի տրամադրման ծառայությունների մատուցման դեպքում մշտական հաստատության ձևավորման չափանիշները, ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտների շրջանակը, Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտի կարգավիճակի հաստատման մասին տեղեկանքի տրամադրման դրույթները՝ գործընթացի ավտոմատացման նպատակով:
- Նախատեսվում է, որ հարկային մարմինը էլեկտրոնային եղանակով տրամադրելու է ՀՀ հարկային ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը կամ էլեկտրոնային եղանակով հաստատելու է օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված՝ ՀՀ ռեզիդենտության փաստը հաստատող տեղեկանքի ձևը:
- Հարկ վճարողը էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ներկայացնելու հարկային մարմնի հաստատած ձևին համապատասխան դիմում, որում պարունակվելիք տեղեկատվությունը և (կամ) փաստաթղթերը սահմանվում են Հարկային օրենսգրքով:

Պրոբացիայի ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՕ-375-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 12.12.2025թ.)

- Այսուհետ պետական այլ մարմիններում ծառայած և Պրոբացիայի ծառայության պաշտոններում նշանակված պրոբացիայի ծառայողներին հերթական կոչումը շնորհելիս հաշվի կառնվի նաև այդ մարմիններում տվյալ կոչումով ծառայության ժամկետը:

«Կրթության մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-355-Ն (ընդունված՝ 24.10.2025թ., ուժի մեջ՝ 29.11.2025թ.)

- Փոփոխությունները պայմանավորված են երկրում հանրակրթական ուսումնական հաստատությունների լիազոր մարմնի վերանայման, կառավարման և գործունեության հիմնական ուղղություններով իրավակարգավորումների սահմանման անհրաժեշտությամբ:
- Նախատեսվում է, որ հանրակրթական դպրոցները կանցնեն կենտրոնացված կառավարման, որը կնպաստի ոլորտային բազմաթիվ խնդիրների լուծմանը, այդ թվում՝ կրթության զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման և վերլուծությունների արդյունավետության բարձրացմանը, բարեփոխումների իրականացման միասնական ուղեքննիչների և մոտեցումների պահպանմանը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-359-Ն (ընդունված՝ 22.10.2025թ., ուժի մեջ՝ 20.11.2025թ.)

- Նախատեսվում է ավելացնել պաշտպանի լիազորությունները: Մասնավորապես՝ պաշտպանն իրավասու կլինի ներկայացնելու իրավական դիրքորոշում (amicus brief) Սահմանադրական դատարան ներկայացված դիմումների առնչությամբ՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով: Նաև, պաշտպանն իրավասու է խթանելու մարդու իրավունքների միջազգային չափանիշներին ՀՀ օրենսդրության և դրա կիրառման համապատասխանեցումը, իրականացնելու մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ հարցերով հետազոտություններ և այլն:

«Հաշտարարության մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-360-Ն (ընդունված՝ 22.10.2025թ., ուժի մեջ՝ 29.11.2025թ.)

- Սահմանվում է համահաշտարարության հասկացությունը, որի համաձայն՝ կողմերի փոխադարձ համաձայնության առկայության կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում հաշտարարությունը կարող է իրականացվել մի քանի հաշտարարներ ներգրավելու միջոցով:
- Նախատեսվում է, որ հաշտարարների վարձատրության չափը որոշվում է կողմերի և հաշտարարի միջև համաձայնությամբ, իսկ մշտապես գործող հաշտարարական հաստատություն ներգրավելու դեպքում՝ հաստատության կանոններով սահմանված կարգով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-363-Ն (ընդունված՝ 22.10.2025թ., ուժի մեջ՝ 29.11.2025թ.)

- Այսուհետ նախատեսվում է այլընտրանքային խնամքի հրատապ կարիքի դեպքում ամրագրել փաստացի խնամակալի և հոգաբարձուի վերաբերյալ կարգավորումներ:
- Ամրագրվել է երեխայի լավագույն շահերի պարտադիր ապահովումը նրան վերաբերող հարցերում, ներառյալ՝ որդեգրման ու խնամատարության դեպքում: Ամրագրվել են նաև համայնքում մասնագիտացված սոցիալական աշխատողների հստակ գործառնությունները երեխայի պաշտպանության ոլորտում:
- Նախատեսվում է նաև ստեղծել երեխայի պաշտպանության բազմամասնագիտական խորհուրդներ մարզպետի աշխատակազմի, իսկ Երևան քաղաքում՝ քաղաքապետարանի կողմից երեխայի պաշտպանության գործառնությունների իրականացմանն աջակցելու համար: Հստակեցվել է նաև Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի դերը և սահմանվել են քարտուղարության գործառնությունները: Սահմանվել է նաև բռնության կամ դրա ռիսկի դեպքում պարտադիր ահազանգման պարտականությունը: Իսկ ալիմենտի վճարումն իրականացվելու է անկանխիկ ձևով:

«Թափոնների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-372-Ն (ընդունված՝ 13.11.2025թ. ուժի մեջ՝ 12.12.2025թ.), **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-373-Ն, ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 03.06.2026թ.)**

- Հստակեցվում են Կառավարության, շրջակա միջավայրի և առողջապահության նախարարությունների որոշ իրավասությունները, մասնավորապես՝ օրենքով կսահմանվի թափոնների կառավարման ոլորտը կանոնակարգող որոշ նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար իրավական հիմքը: Նախատեսվում է նաև ամրագրել վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորմանը վերաբերող կարգավորումները:
- Կհստակեցվի նաև թափոնների հաշվառման, վտանգավոր թափոնների անձնագրավորման, վիճակագրական հաշվետվությունների ներկայացման, թափոնների հեռացման վայրերում մոնիթորինգի և ուսումնասիրությունների իրականացման գործընթացները: ՎԻՎ օրենսգրքի 43.2-րդ հոդվածում լրացում կատարելով նախատեսվում է աղբավայրի մոնիթորինգի իրականացման կարգը խախտելու համար վարչական պատասխանատվության միջոց սահմանել նաև աղբավայրը տնօրինողների նկատմամբ:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին ՀՕ-376-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- ՀՀ հարկային օրենսգրքի փոփոխություններով հնարավորություն կտրվի շահութահարկ վճարողներին՝ իրենց համախառն եկամտի մինչև 2.5%-ի չափով պետական հանրակրթական դպրոցներին, ԲՈՒՀ-երին և նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական կրթական հաստատություններին իրականացված նվիրատվությունները նվազեցնել համախառն եկամտից:

«Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-379-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ պաշտոնական հրապարակման օրն ընդգրկող ամսվան հաջորդող 7-րդ ամսվա 1-ին օրը)

- Օրենքի փոփոխությունը պայմանավորված է «Մաքսային վճարների միասնական հաշիվ» էլեկտրոնային համակարգի (Միասնական հաշիվ) ներդրման անհրաժեշտությամբ, որը միտված է մաքսային վճարների գծով պարտավորությունների հաշվառման և մարման ընթացակարգերի արդյունավետության բարձրացմանը: Միասնական հաշվի ներդրման հիմնական նպատակներն են՝
 1. նպաստել մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացմանը՝ ներդրված ծառայությունների և ներքին բիզնես գործընթացների արդիականացման, թվայնացման միջոցով,
 2. մաքսային մարմինների կողմից իրականացվող գործառույթների դյուրացում, պարտավորությունների հաշվառման, ինչպես նաև դրանց մարման գործընթացների ավտոմատացում,
 3. չմարված պարտավորությունների մասով տույժերի հաշվարկի ավտոմատացում,
 4. մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ հարկերի և տուրքերի դրանց գծով տույժերի և տուգանքների հաշվառման կենտրոնացված կառավարումը և հավաքագրված տեղեկատվության օգտագործումը մաքսային հսկողության իրականացման բոլոր փուլերում մաքսային հսկողության օբյեկտների ընտրության համար:
- Նաև նախատեսվում է, որ լուծարվող իրավաբանական անձի մաքսային պարտավորությունների կատարման պարտականությունը դրվում է այդ կազմակերպության լուծարման հանձնաժողովի վրա՝ այդ կազմակերպության դրամական միջոցների, ներառյալ գույքի և ապրանքների վաճառքից ստացված միջոցների հաշվին: Իսկ վերակազմակերպված իրավաբանական անձի մաքսային պարտավորությունները կատարում է իրավաբանական անձի իրավահաջորդը (իրավահաջորդները):

ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-380-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 14.12.2025թ., «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-381-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Օրենքի նպատակն է ջրային ռեսուրսների կառավարման մեխանիզմների ստեղծման միջոցով ազգային ջրային պաշարի պահպանումը, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով անհրաժեշտ քանակի և որակի ջրով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարումը և շրջակա միջավայրի կայունության ապահովումը:

«Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-384-Ն, ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-385-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 01.03.2026թ.)

- Նախատեսվում է, որ բռնություն գործադրած անձը պարտավոր է կրել անհետաձգելի միջամտության որոշման կատարումն ապահովելու նպատակով օգտագործվող էլեկտրոնային հսկողության միջոցը, իսկ կրելուց խուսափելը կամ հրաժարվելն կառաջացնի քրեական պատասխանատվություն:

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Եվրոպական միության ճգնաժամային կառավարման գործողություններում Հայաստանի Հանրապետության մասնակցության շրջանակը սահմանելու մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին ՀՕ-369-Ն (ընդունված՝ 28.11.2025թ., ուժի մեջ՝ 29.11.2025թ.)

- «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Եվրոպական միության ճգնաժամային կառավարման գործողություններում Հայաստանի Հանրապետության մասնակցության շրջանակը սահմանելու մասին» համաձայնագիրը հնարավորություն է կընձեռնի ճգնաժամերի կառավարման ոլորտում լավագույնս օգտագործել ԵՄ փորձն ու գիտելիքները:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1125-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1558-Լ, ընդունված՝ 06.11.2025թ., ուժի մեջ՝ 08.11.2025թ.)

- Որոշմամբ կատարվող փոփոխություններն ուղղված են «Թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագրի» կիրառումը հստակեցնելուն և խստացնելուն: Նախ, առաջարկվում է, որ ծրագրով պետական աջակցություն կստանան միայն այն ընկերությունները, որոնք միացել են ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված Կորպորատիվ կառավարման կանոնագրքին:
- Հստակեցվում է նաև պարտատոմսերի շրջանառության համար օժանդակություն ստանալու համար դիմելու և այն ստանալու ընթացակարգը, բաժնետոմսերի թողարկման, տեղաբաշխման և ցուցակման գործիքի շրջանակում փոխհատուցվող ծախսերի շարքում ներառվում են նաև ներդրումային ծառայությունների ձեռքբերման ծախսերը, իսկ միջազգային վարկանիշային գործակալություններից վարկանիշի ստացման դեպքում սահմանվում է փոխհատուցման առավելագույն չափ՝ մինչև 50 մլն ՀՀ դրամ:

«Բուսաբուծության ոլորտում աշխատանքի անվտանգության կանոնները հաստատելու մասին» (N 1578-Ն, ընդունված՝ 06.11.2025թ., ուժի մեջ՝ 06.01.2026թ.)

- Որոշմամբ սահմանվում է բուսաբուծության ոլորտում, մասնավորապես՝ ջերմատնային տնտեսություններում, բաց դաշտում և այգիներում աշխատանքի անվտանգության ոլորտի համակարգված կարգավորում: Սահմանվում են գործատուի պարտականությունները՝ աշխատողների աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման, հրդեհային անվտանգության և անհատական պաշտպանիչ միջոցների տրամադրման, անվտանգության նշաններով ապահովման, ինչպես նաև պետսիցիդների և ագրոքիմիկատների անվտանգ պահեստավորման, օգտագործման և մնացորդների վերացման կազմակերպման մասով:
- Միաժամանակ ամրագրվում են աշխատողների պարտականությունները՝ սահմանված անվտանգության կանոնների, տեխնիկայի շահագործման, հրդեհային և էլեկտրական անվտանգության պահանջների, անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործման և բժշկական զննումներ անցնելու առումով:

- Սահմանվում են նաև մի շարք արգելքներ և հատուկ անվտանգության ռեժիմներ՝ հատկապես բարձր ռիսկայնությամբ աշխատանքների, պետսիցիդների կիրառման, բարձրությունից, էլեկտրահաղորդման գծերի մոտ և այլ վտանգավոր գործոնների դեպքում:
- Որոշումը նաև նախատեսում է, որ չկարգավորված հարցերի պարագայում կիրառելի են աշխատանքի անվտանգության վերաբերյալ ընդհանուր նորմատիվ իրավական ակտերը, առաջին հերթին՝ ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջները, ինչպես նաև գործատուներին տրամադրում է հնարավորություն սահմանելու բացառություն հանդիսացող անվտանգության ներքին պահանջներ:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (N 1569-Ն, ընդունված՝ 06.11.2025թ., ուժի մեջ՝ 08.11.2025թ.)

- Որոշմամբ վերանայվում և պարզեցվում են կենսաթոշակների նշանակման, աշխատանքային ստաժի հաշվարկման ու տվյալների ստուգման կանոնները:
- Հստակ ամրագրվում է, որ ոլորտի լիազոր մարմինը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է (ինչպես նաև՝ Միասնական սոցիալական ծառայությունը), վերանայվում են կերակրողին կորցնելու, հաշմանդամության, ուսման ընթացքում և Ռուսաստանի Դաշնությունից տեղափոխվող կենսաթոշակների նշանակման ու վերականգնման ընթացակարգերը:
- Հստակեցվում են քաղաքացիների ներկայացրած տվյալների ու փաստաթղթերի ստուգման կանոնները, աշխատանքային և զինվորական ստաժի հաշվառման կարգերը, այդ թվում՝ դատարանի վճռով հաստատված կամ անձնական տվյալների տեխնիկական տարբերություններ պարունակող դեպքերում:
- Լրացվում է ստաժը հաստատող փաստաթղթերի ցանկը, հստակեցվում են լիազորագրով կենսաթոշակների վճարման պայմանները, իսկ կենսաթոշակի թղթային վկայականի մասին նախորդ կանոնները ուժը կորցնում են՝ հաշվի առնելով էլեկտրոնային տեղեկանքների և QR կոդերի կիրառումը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1591-Ն, ընդունված՝ 14.11.2025թ., ուժի մեջ՝ 24.11.2025թ.)

- Որոշմամբ առաջարկվում է վերանայել մաքսային մարմինների կողմից լիցենզիաների կատարման վերաբերյալ տեղեկությունների ներկայացման կարգը: Եթե գործող կարգով մաքսային մարմինները պարտավոր են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ էլեկտրոնային ձևով տրամադրել լիցենզիաների կատարման վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն լիազոր մարմիններին, ապա որոշմամբ նախատեսվում է, որ այդ տեղեկությունները կտրամադրվեն միայն լիազոր մարմինների հարցման հիման վրա, ոչ թե պարբերաբար:
- Փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ հայտարարագրման և էլեկտրոնային ծանուցումների գործող համակարգերում տվյալների ընդհանուր զանգվածի ուսումնասիրությունը և յուրաքանչյուր եռամսյակի կտրվածքով անհրաժեշտ տվյալների առանձնացումը հանգեցնում է մաքսային մարմինների համար անհամաչափ մեծ լրացուցիչ ռեսուրսի և ժամանակային ծախսերի, հատկապես՝ հայտարարագրերում տեղեկությունների ոչ ամբողջական կամ ոչ ճշգրիտ լրացման պարագայում:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մայիսի 25-ի N 808-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N 1662-Ն, ընդունված՝ 20.11.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Որոշմամբ փոփոխվում է ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 25-ի N 808-Ն որոշումը, որով հաստատված է ՀՀ-ից արտահանվող և ՀՀ տարածքով տարանցիկ փոխադրվող զգայուն ապրանքների ցանկը: Որոշումը լրացվում է նոր կարգավորմամբ, ըստ որի՝ այն ապրանքները, որոնք արդեն արտահանվել կամ տարանցիկ են տեղափոխվել նույն որոշմամբ սահմանված թույլտվությամբ, հետագայում վերադարձվում են Հայաստան (օրինակ՝ վերանորոգման, փոխարինման կամ վերադարձի այլ հիմքով) և ապա կրկին փոխանցվում են նույն վերջնական օգտագործողին, վերահսկվում են նույն թույլտվության շրջանակում՝ առանց նոր թույլտվության անհրաժեշտության:
- Միաժամանակ, որոշման հավելվածը՝ զգայուն ապրանքների ցանկը, ներկայացվում է նոր խմբագրությամբ: Ցանկում նոր ավելացվող ԱՏԳ ԱԱ ծածկագրերն են՝ 730890, 840991, 841221, 841350, 841950, 841989, 841990, 842123, 842129, 842139, 842199, 842430, 842833, 842839, 842890, 845710, 845811, 845891, 845961, 846693, 847720, 847780, 847910, 847982, 847989, 848180, 850220, 850710, 852990, 853890, 870121, 870899, 871639, 871690, 890400:

- Ցանկից դուրս են գալիս 8504, 8526, 8541 10, 8412 21 800, 8419 50 000, 8421 99 000 ԱՏԳ ԱԱ ծածկագրերով ապրանքները:

«Հայաստանի Հանրապետությունից երկաթի և չեգիրված պողպատի, երկաթից կամ չեգիրված պողպատից կիսապատրաստուկների, լեգիրված ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձևերով պողպատի, զտված պղնձի և չմշակված պղնձային համաձուլվածքների, չմշակված ալյումինի, ալյումինի փոշիների և թեփուկների՝ դեպի երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր սահմանափակում կիրառելու, արտահանման լիցենզիայի տրամադրման կարգն ու պայմանները և հիմնական լիցենզիայի ձևը սահմանելու մասին» (N 1643-Ն, ընդունված՝ 20.11.2025թ., ուժի մեջ՝ 03.01.2026թ.)

- Սույն կարգով նախատեսվում է տրամադրել արտահանվող ԱՏԳ ԱԱ 7206, 7207, 7224, 7403, 7601 և 7603 ծածկագրերին դասվող ապրանքների համար հիմնական լիցենզիա, որտեղ կնշվի արտահանվող ապրանքի ընդհանուր քանակը, իսկ հայտատուն կարող է այն արտահանել լիցենզիայով սահմանված ժամկետում առանձին խմբաքանակներով:
- Կարգով հաստատվում են հիմնական հասկացությունները, օրինակ՝ տվյալ ակտի մասով ապրանքների, լիցենզավորման, հայտատուի և լիազոր մարմնի հասկացությունները: Լիազոր մարմինն այս դեպքում ՀՀ էկոնոմիկային նախարարությունն է:
- Որոշմամբ սահմանվում են նաև տրամադրման ենթակա լիցենզիաների տեսակները, լիցենզիայի հայտ ներկայացնելու կարգը և դրա տրամադրման կարգը, ինչպես նաև ձևաթղթերը, որոնք հայտ ներկայացնելու դեպքում ենթակա են լրացման:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2339-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» (N 1665-Ն, ընդունված՝ 27.11.2025թ., ուժի մեջ՝ 28.11.2025թ.)

- Որոշմամբ փոփոխվում է կենսաթոշակառուների անկանխիկ վճարումներից հետվճար տրամադրելու մեխանիզմը. հետվճարի չափը հաշվարկող տոկոսադրույքը բարձրացվում է 12%-ից մինչև 20%, իսկ մեկ ամսվա առավելագույն գումարը՝ 6000-ից մինչև 10 000 դրամ՝ միաժամանակ հստակ ամրագրելով, որ կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներից հետվճար չի հաշվարկվում:
- Միջոցառման կիրառման ժամկետը երկարացվում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը, և այն տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից հետո կատարված անկանխիկ վճարումների վրա:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի N 1450-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1680-Լ, ընդունված՝ 27.11.2025թ., ուժի մեջ՝ 28.11.2025թ.)

- Որոշմամբ նախատեսվում է «Ներդրումների ներգրավման ծրագիրը հաստատելու մասին» որոշման մեջ երկարաձգել ներդրումների, այդ թվում՝ արտոնությունների մշտադիտարկման և գնահատման համակարգի ներդրման ժամկետը. ծրագրի հավելվածով սահմանված միջոցառման ավարտի ժամկետը 2025 թվականի դեկտեմբերից փոխվում է 2026 թվականի դեկտեմբեր:
- Սա պայմանավորված է նրանով, որ նախ պետք է լիարժեք ձևավորվի և գործարկվի օտարերկրյա ներդրումների ռեեստրի տվյալների բազան, որը լինելու է ներդրումային քաղաքականության մոնիթորինգի և գնահատման վերլուծական հիմքը, և միայն դրանից հետո է հնարավոր ներդրումների մշտադիտարկման և գնահատման ամբողջական համակարգի ներդրումը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 53-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1671-Ն, ընդունված՝ 27.11.2025թ., ուժի մեջ՝ 28.11.2025թ.)

- Որոշմամբ առաջարկվում է ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 53-Ն որոշումից հանել այն ձևակերպումը, ըստ որի պետական գաղտնիքի շարքին էին դասվում ՀՀ կենտրոնական բանկի դրամական պահուստների վերաբերյալ տեղեկությունները՝ յուրաքանչյուր անվանական արժեքի համար, ինչպես նաև հայկական դրամի պատրաստման տեխնոլոգիայի և պաշտպանության առանձնակի հատկանիշների մասին տվյալները:
- Նշվում է, որ դրամանիշերի պաշտպանական հատկանիշները և տեխնիկական բնութագրերը իրականում չեն կարող լինել գաղտնիք, քանի որ դրանք մշակվում են արտասահմանյան կազմակերպությունների կողմից, կիրառվում են այլ երկրների դրամների վրա, հայտնի են արտադրողներին ու ոլորտի փորձագետներին և լայնորեն մատչելի են նաև հանրությանը՝ տեղեկատու նյութերի, մեդիայի և ինտերնետի միջոցով:
- Բացի այդ, դրամանիշերի թողարկման մրցույթների և հաղթող դրամահատարանների հետ պայմանագրերի կնքման ընթացակարգում նման տվյալների «գաղտնի» կարգավիճակը չափազանց բարդացնում է համագործակցությունը, ավելացնում ծախսերն ու ժամկետները և ռիսկ է ստեղծում արդեն ձևավորված գործընկերային հարաբերությունների դադարեցման համար:
- Այդ պատճառով առաջարկվում է վերոնշյալ տեղեկությունները հանել պետական գաղտնիք համարվող տեղեկությունների ցանկից, որպեսզի դրամի թողարկման գործընթացը լինի ավելի արդյունավետ:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1442-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1702-Ն, ընդունված՝ 27.11.2025թ., ուժի մեջ՝ 29.11.2026թ.)

- Որոշմամբ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը երկարացվում և հստակեցվում է արտոնյալ ռեժիմը, որի շրջանակում թույլատրվում է Հայաստանում ներքին սպառման համար ներմուծել որոշակի մասնաթերք, ձկնատեսակներ և սնունդ (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0206, 0207, 0209, 0210, 0301–0308, 1601, 1602, 1604, 1605 ծածկագրերով) Եվրոպական միության, Մեծ Բրիտանիայի, Իսլանդիայի, Նորվեգիայի, Շվեյցարիայի, Կանադայի, ԱՄՆ-ի և Վրաստանի արտադրողներից, նույնիսկ եթե այդ երրորդ երկրների արտադրող կազմակերպությունները դեռ չեն ընդգրկվել ԵԱՏՄ անասնաբուժական վերահսկողության միասնական ռեեստրում կամ ունեն սահմանափակ կարգավիճակ:

«Պարտապանի միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումար և պարտապանի միակ բնակարանի իրացումից վերադարձված նվազագույն գումարի տնօրինման կարգը սահմանելու մասին» (N 1709-Ն, ընդունված՝ 27.11.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Որոշմամբ սահմանվում է, որ պարտապան ֆիզիկական անձի (ներառյալ անհատ ձեռնարկատիրոջ) միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումարը կազմում է 7 800 000 դրամ, իսկ եթե վաճառվում է միայն այդ բնակարանի բաժնեմասը, նվազագույն գումարը հաշվարկվում է նույն թվի և բաժնեմասի արտադրյալով: Այդ նվազագույն գումարը պարտապանի ընտրությամբ պահվում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեպոզիտ հաշվին կամ պարտապանի հատուկ բանկային հաշվին և կարող է օգտագործվել միայն բնակարան ձեռք բերելու կամ վարձակալելու, պարտապանի կամ նրա մերձավոր ազգականի բուժման կամ կրթության, ինչպես նաև կատարողական ակտը կատարելու համար՝ գումարը անմիջապես փոխանցելով համապատասխան պայմանագրով կամ որոշմամբ նշված հաշվեհամարին:
- Միաժամանակ ուժը կորցրած է ճանաչվում նույն առարկան կարգավորող 2017 թ. N 808-Ն որոշումը, իսկ նոր կարգավորումը գործելու է «Կատարողական վարույթի մասին» օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 01.01.2026թ.:

«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» (N 1694-Ն, ընդունված՝ 27.11.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Որոշմամբ նախատեսվում է ՀՀ կառավարության երեք որոշումներ՝ հարկադիր աճուրդների, աճուրդների մասին տեղեկությունները հրապարակող լրատվամիջոցի ընտրության և հարկադիր կատարման ընթացքում անշարժ գույքի գնահատող լիցենզավորված անձանց ընտրության կարգերի մասին, ուժը կորցրած ճանաչել՝ հաշվի առնելով, որ այս հարաբերությունները արդեն ամբողջությամբ կարգավորվում են նոր «Կատարողական վարույթի մասին» օրենքով:
- Միաժամանակ սահմանվում է, որ այդ որոշումները շարունակում են կիրառվել միայն այն կատարողական վարույթների նկատմամբ, որոնց համար օրենսդրությամբ ամրագրված անցումային դրույթներով դեռ կիրառելի է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքը, իսկ նոր որոշումը կգործի «Կատարողական վարույթի մասին» օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 01.01.2026թ.:

«Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների, նոտարների միջև փաստաթղթաշրջանառության և տվյալների էլեկտրոնային եղանակով փոխանակման, գրանցող մարմիններից պարտապանին, պարտապան իրավաբանական անձի իրավասու անձին նույնականացնող և կատարողական գործողությունների կատարման համար անհրաժեշտ անձնական և այլ տվյալները, ինչպես նաև օպերատորից կամ ծառայություններ մատուցողից պարտապանի կոնտակտային տվյալները հարկադիր կատարողի կողմից ստանալու կարգերը սահմանելու մասին» (N 1710-Ն, ընդունված՝ 27.11.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Որոշմամբ սահմանվում է հարկադիր կատարումն ապահովող ծառայության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների ու նոտարների միջև փաստաթղթաշրջանառության և տվյալների էլեկտրոնային փոխանակման միասնական կարգը, ինչպես նաև գրանցող մարմիններից պարտապանի, նրա իրավասու անձանց, ամուսնական կարգավիճակի, գույքի և այլ անհրաժեշտ անձնական տվյալների, ինչպես նաև կապի օպերատորներից պարտապանի կոնտակտային տվյալների ստացման կանոններն ու ժամկետները:
- Միաժամանակ նախատեսվում է, որ այս ամենը իրականացվում է հատուկ կապուղիներով և փոխգործելի տեղեկատվական համակարգերով, համապատասխան մարմինները պարտավոր են հարմարեցնել և թարմացնել իրենց համակարգերը, իսկ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության վերաբերյալ նախորդ երկու կարգավորումները (N 350-Ն և N 687-Ն) ուժը կորցրած են ճանաչվում և նոր կարգը կիրառվելու է «Կատարողական վարույթի մասին» օրենքի ուժի մեջ մտնելու պահից՝ 01.01.2026թ.:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկության մասին» (N 1566-Լ, ընդունված՝ 06.11.2025թ., ուժի մեջ՝ 07.11.2025թ.)

- Հայաստանի կառավարությունը դրական եզրակացություն է տվել օրենքի նախագծին, որով պողպատե ամրանների (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7214, 7215) ներմուծման լիցենզիաների պետական տուրքը նախատեսվում է բարձրացնել՝ բազային տուրքի 29-ապատիկից մինչև 45-ապատիկ յուրաքանչյուր մինչև 1 տոննա ապրանքի ներմուծման համար: Նախատեսվող փոփոխության նպատակն է հարթեցնել մրցակցային պայմանները Իրանից ներկրվող և տեղական արտադրության ամրանների միջև՝ հաշվի առնելով ազատ առևտրի ռեժիմով տրամադրված մաքսատուրքերի արտոնությունները:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Շուկայի վերահսկողության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերին հավանություն տալու մասին» (N 1590-Ա, ընդունված՝ 14.11.2025թ., ուժի մեջ՝ 15.11.2025թ.)

- Օրենքների փոփոխության փաթեթով առաջարկվում է խստացնել և ընդլայնել մեկանգամյա օգտագործման պլաստիկ սահմանափակումները: «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում սահմանվում է «մեկանգամյա օգտագործման պլաստիկ արտադրանքի» հասկացությունը և փաստացի արգելվում են գրեթե բոլոր պլաստիկ տոպրակները՝ բացառությամբ կշռափաթեթավորման համար նախատեսված պարկերի և երկրորդային հումքից արտադրված աղբի պարկերի: Արգելքը վերաբերելու է ոչ միայն վաճառքին, այլև նման արտադրանքի առկայությանը կամ ցանկացած ձևով օտարմանը, ինչպես նաև մեկանգամյա օգտագործման պլաստիկ սպասքի ու տարաների որոշ տեսակների՝ ափսեների, բաժակների, խառնելու ձողիկների և սննդի տարաների՝ որոշ բացառություններով: Սրանց մի մասի արգելքը ուժի մեջ կմտնի 2027 թվականի հունվարի 1-ից:

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում ներդրվում է նոր կարգավորում, որով մեկանգամյա օգտագործման պլաստիկ թիրախային խմբի ապրանքների առկայությունը կամ օտարումը կդառնա առանձին իրավախախտում՝ նախատեսելով տուգանքներ, իսկ առաջին խախտման դեպքում՝ նախազգուշացում: Այս խախտումների վերահսկման լիազոր մարմին է դառնում ոչ միայն համայնքը, այլև Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը:

- «Շուկայի վերահսկողության մասին» օրենքում ներմուծվում է «դիտարկում» կոչվող նոր և ավելի արդյունավետ վերահսկողական մեխանիզմ, որը Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը կարող է իրականացնել առանց նախնական ծանուցման՝ մինչև 5 աշխատանքային օր տևողությամբ: Դիտարկմամբ վերահսկողությունը կապվում է երկու ոլորտի հետ. մեկանգամյա օգտագործման պլաստիկ արգելքները (պլաստիկ տոպրակներ, սպասք) և ծխախոտային արտադրատեսակների ու դրանց փոխարինիչների առևտրի, փաթեթավորման, գովազդի ու վաճառքի սահմանափակումները:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկության մասին» (N 1693-Լ, ընդունված՝ 27.11.2025թ., ուժի մեջ՝ 29.11.2025թ.)

- Առաջարկվում է «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի Պետական գույքի օտարման կարգի առանձնահատկությունները լրացնել նոր ենթակետով, ըստ որի՝ այդ օրենքի ենթակայության տակ գտնվող պետական գույքի այն օբյեկտների նկատմամբ, որոնք հանդիսանում են նշված օրենքով սահմանված հուշարձաններ (այդ թվում՝ հուշարձանների պետական ցուցակներում ներառված կրոնական կառույցներ), դրանց հատուցմամբ կամ անհատույց օտարման դեպքում կիրառվելու են «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության մասին» օրենքով նախատեսված հատուկ կարգավորումները:

«Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Արաբական Միացյալ Էմիրությունների՝ մյուս կողմից, միջև տնտեսական գործընկերության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին» (N 1603-Ա, ընդունված՝ 14.11.2025թ., ուժի մեջ՝ 15.11.2025թ.)

- 2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների, մի կողմից, և Արաբական Միացյալ Էմիրությունների, մյուս կողմից, միջև տնտեսական գործընկերության մասին» համաձայնագրի նպատակն է ազատականացնել և պարզեցնել Կողմերի միջև ապրանքների առևտուրը՝ սակագնային և ոչ սակագնային խոչընդոտների նվազեցմամբ, մաքսային, սանիտարական, տեխնիկական, պետական գնումների, էլեկտրոնային առևտրի և այլ ոլորտների կանոնների հստակեցմամբ ու թափանցիկությամբ: Համաձայնագրով ԵԱՏՄ երկրները ստանում են արտոնյալ մուտք ԱՄԷ շուկա՝ ապրանքային անվանացանկի 86%-ի համար, իսկ Հայաստանի համար ընթացիկ արտահանման մոտ 95%-ի մասով սահմանվում է արտոնյալ ռեժիմ, ինչի արդյունքում միջին մաքսատուրքը 6%-ից կնվազեցվի 2.6% և կձևավորվի շուրջ 500 հազ. դոլարի չափով սուբսիդավորման էֆեկտ:
- Ընդգծվում է Հայաստանի արտահանման առաջնային հետաքրքրություն ունեցող գյուղատնտեսական (մի շարք մրգեր, հյութեր, մեղր և այլն) և արդյունաբերական (ալյումին, բժշկական և ռադիոէլեկտրոնային սարքավորումներ, կահույք և այլն) ապրանքների, ինչպես նաև ոսկերչական արտադրանքի համար շուկայի մեծ, չիրացված ներուժը, որի իրացումը հնարավոր է լինելու համաձայնագրի գործարկումից հետո:

«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» (N 1605-Ա, ընդունված՝ 14.11.2025թ., ուժի մեջ՝ 15.11.2025թ.)

- Օրենքի փոփոխության նախագծով առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքում սահմանել ԵՏՄ առևտրի էլեկտրոնային հարթակների միջոցով ֆիզիկական անձանց կատարվող ապրանքների մատակարարման միասնական կանոններ, այսինքն՝ ով է համարվում առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործող, ինչ է «ապրանքների էլեկտրոնային առևտուրը», երբ է մատակարարման վայրը համարվում ՀՀ-ն, ինչպես է որոշվում հարկման բազան արտարժույթով գործարքների դեպքում և որ օրն է համարվում մատակարարման պահ ԱԱՀ-ի հաշվարկի համար:

- Նույն կարգավորմամբ առանձնացվում են ներմուծման և ԵՏՄ տարածք արտահանվող ապրանքների գործարքները, սահմանվում է, որ շատ դեպքերում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է հենց հարթակը շահագործողը, ինչպես նաև նախատեսվում է ԱԱՀ-ի 0% դուրսբաշափ ԵՏՄ էլեկտրոնային հարթակներով ՀՀ տնտեսավարողների կատարած որոշ արտահանման գործարքների համար՝ պայմանով, որ հարթակը հարկային մարմին ներկայացնի մանրամասն տեղեկատվություն այդ գործարքների վերաբերյալ: Սահմանվում են նաև հաշվետվությունների ներկայացման ժամկետները (մինչև հաջորդ ամսվա 20-ը), հստակեցվում է ներմուծման ԱԱՀ-ի վճարման ընթացակարգը և ամրագրվում է, որ առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործողները չեն կարող գործել հարկման հատուկ ռեժիմներով:

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» (N 1595-Ա, ընդունված՝ 14.11.2025թ., ուժի մեջ՝ 15.11.2025թ.)

- Նախագծով նախատեսվում է փոփոխել «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածը՝ օդային ուղևորների ելքի համար պետական տուրքի վճարումից ազատման արտոնությունը հստակեցնելու և ընդլայնելու նպատակով: Մասնավորապես՝ սահմանվում է, որ արտոնությունից կարող են օգտվել նաև այն ուղևորները, ովքեր մեկնում են այնպիսի հայկական ավիաընկերությունների միջոցով, որոնք ԵՄ թռիչքային անվտանգության «սև ցուցակում» լինելու պատճառով իրենց կողով չկարողանալով սպասարկել տվյալ IATA օդանավակայանները, նույն ուղղությամբ թռիչքները կազմակերպել և իրականացրել են թաց լիզինգով շահագործվող օդանավերով. այս դեպքում այդ օդանավակայանները համարվում են «չսպասարկված» և ուղևորները նույնպես ազատվում են տուրքի վճարումից:
- Վերանայվում է նաև արտոնության ժամկետի ռեժիմը. 36 ամսով տրվող արտոնությունը կարող է երկարաձգվել մինչև երկու անգամ՝ յուրաքանչյուր անգամ 24 ամսով, իսկ այն, թե ինչպես է քննարկվում և սահմանվում այդ երկարաձգումը, ինչպես նաև «չսպասարկվող ուղղության» և չվերթների նվազագույն հաճախականության պահանջները, լիազորվում է սահմանել ՀՀ կառավարությունը:
- Սահմանվում է, որ օրենքի այս փոփոխությունը տարածվում է դեռևս 2020 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա, ենթաօրենսդրական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները պետք է կատարվեն 3 ամսում, իսկ թաց-լիզինգի առանձնահատուկ կարգով նախատեսված նոր արտոնությունից կարելի է օգտվել օրենքի փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

«ՀՀ դատական օրենսգրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերին հավանություն տալու մասին» (N 1677-Ա, ընդունված՝ 27.11.2025թ., ուժի մեջ՝ 28.11.2025թ.)

- նախատեսվում է բարեփոխել դատական և հակակոռուպցիոն համակարգում բարեվարքության ուսումնասիրության (վեթիքինգի) հրապարակայնության կարգավորումները՝ համադրելով թափանցիկության պահանջն ու անձնական տվյալների պաշտպանության անհրաժեշտությունը:
- Մասնավորապես՝ «Դատական օրենսգրքում», «ԱԺ կանոնակարգում», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և Դատախազության, Հակակոռուպցիոն կոմիտեի ու Քննչական կոմիտեի մասին օրենքներում սահմանվում է, որ դատավորների, ՍԴ դատավորների, Վճռաբեկ դատարանի նախագահի, ԲԴԽ անդամների, Գլխավոր դատախազի, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի, ինչպես նաև ՔԿ նախագահի, տեղակալների ու առաջխաղացման ենթակա քննիչների վերաբերյալ ԿԿՀ խորհրդատվական եզրակացությունների միայն եզրափակիչ մասը դառնում է հրապարակային՝ համապատասխան մարմնի կայքում տեղադրվելու պարտադիր պահանջով՝ նշանակման կամ ընտրության մասին որոշումից հետո երեք օրվա ընթացքում:

«ՀՀ դատական օրենսգրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական և «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու մասին» (N 1668-Ա, ընդունված՝ 27.11.2025թ., ուժի մեջ՝ 28.11.2025թ.)

- Առաջարկվում է վերանայել Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ձևավորման ու գործունեության կարգավորումները: Հանձնաժողովի կազմը մեծացվում է՝ նախատեսելով 11 անդամ, որոնցից 6-ը դատավոր, 5-ը՝ ոչ դատավոր անդամներ, իսկ առաջին ատյանի դատարաններից ընտրվող դատավոր անդամների համար ներդրվում է նվազագույն աշխատանքային ստաժի շեմ և կարգապահական պատասխանատվության բացակայության պահանջ: Դատավոր չհանդիսացող անդամների համար սահմանվում են վարքագծի հատուկ կանոններ: Նախատեսվում է, որ հանձնաժողովի ոչ դատավոր անդամը իր լիազորությունների ընթացքում չի կարող դատարաններում դատական ներկայացուցչություն իրականացնել:

- Թեկնածուների առաջադրման շրջանակը լայնացվում է. անդամակցման իրավունք են ստանում ոչ միայն հասարակական կազմակերպությունները, այլ բոլոր համապատասխան ոչ առևտրային կազմակերպությունները (բացառությամբ ՊՈԱԿ-ների և ՀՈԱԿ-ների), որոնք վերջին 5 տարում փաստացի գործել են մարդու իրավունքների, ժողովրդավարության կամ դատական իշխանության ոլորտում:
- Վերանայվում է նաև դատավորների թեկնածուների ցուցակի հերթականությունը՝ ավելի բարենպաստ դիրք տալով գիտական աստիճան ունեցող և երկարամյա մասնագիտական փորձ ունեցող թեկնածուներին:

«ՀՀ սնանկության օրենսգրքի և հարակից օրենքների նախագծերին հավանություն տալու մասին» (N 1667-Ա, ընդունված՝ 27.11.2025թ., ուժի մեջ՝ 28.11.2025թ.)

- Ընդունվում է նոր «Սնանկության օրենսգրք», որը մեկ միասնական ակտով կարգավորում է սնանկության վտանգի բոլոր հարաբերությունները՝ ներառյալ կանխարգելիչ վերակառուցումը, ֆինանսական առողջացումը, գույքի վաճառքը, պարտատերերի ժողովի ու խորհրդի դերակատարումը, սնանկության դատարանի իրավասությունն ու դատավարության մանրամասն ընթացակարգերը, ինչպես նաև սնանկության վարույթների հիմքում ընկած սկզբունքները՝ պարտատերերի հավասարություն, արդար բաշխում, արդյունավետություն, թափանցիկություն և այլն:
- Միաժամանակ հստակ սահմանվում են անվճարունակության շեմերը (օր.՝ նվազագույն աշխատավարձի 5000-ապատիկից բարձր անվիճելի պարտավորությունների 3 ամսից ավելի կետանց, կամ հաշվեկշռային անվճարունակություն), կանխարգելիչ վերակառուցման և ֆինանսական առողջացման ինստիտուտները, պարտապան ֆիզիկական անձի պարտքերից ազատման պայմանները, ինչպես նաև սնանկության գործերով դատական ենթակայության և կազմի նոր կանոնները:
- Ընդունվում են նաև հարակից փոփոխություններ Քաղաքացիական, Վարչական և Քրեական դատավարության օրենսգրքերում, Քրեական օրենսգրքում, Հարկային օրենսգրքում և այլ օրենքներում. հստակեցվում է, որ սնանկ ճանաչված անձի շահերը դատարաններում ներկայացնում է սնանկության կառավարչը, որոշ դեպքերում նախատեսվում է արգելանքների հանում սնանկության վարույթի շրջանակում գույքի իրացման համար, ինչպես նաև սահմանվում են որոշ արտոնություններ պարտատերերի գործողությունների համար:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացված նախագծերը ընդունվել են առաջին ընթերցմամբ:

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծանուցումները ֆիզիկական, ինչպես նաև իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին իրականացնել բացառապես էլեկտրոնային եղանակով:
- Որպես էլեկտրոնային եղանակ նախատեսվում է ֆիզիկական անձանց համար ծանուցումներ ստանալու միջոցը սահմանել ֆիզիկական անձանց պաշտոնական էլեկտրոնային փոստը, իսկ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար Հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջը:
- Եթե անհատական ծանուցմանը կից պետք է ուղարկվի փաստաթուղթ, ապա այն ուղարկվում է ծանուցողի կողմից վերահսկվող սերվերում տեղադրված հղման միջոցով, իսկ այդ հնարավորության բացակայության դեպքում՝ փաստաթուղթը կցվում է ծանուցմանը: Ծանուցումը տեղադրելը, անձի կողմից համակարգի անձնական էջ մուտք գործելը և ծանուցումը կարդալը հավաստվում է էլեկտրոնային համակարգի կողմից:
- Սահմանվում է նաև, որ ծանուցման տեղադրման մասին տվյալ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը տեղեկացվում է նաև իր կողմից տրամադրված հավելյալ էլեկտրոնային փոստի հասցեով:
- Եթե իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը ուղարկված ծանուցումը տեղադրվելուց 3 օր հետո բացակայում է հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ մուտք գործելու վերաբերյալ էլեկտրոնային հավաստումը, ապա ծանուցումն իրականացվում է հրապարակային ծանուցման միջոցով: Սույն դեպքում իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համարվում է պատշաճ ծանուցված ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում ծանուցումը տեղադրվելու օրվանից հետո՝ 5-երորդ օրը:

- Ֆիզիկական անձանց վերաբերելի կարգավորումներով նախատեսվում է, որ ծանուցումը տեղադրելը, ֆիզիկական անձի կողմից պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելը և ծանուցումը կարդալը հավաստվում է էլեկտրոնային համակարգի կողմից: Ծանուցման մասին տվյալ ֆիզիկական անձը տեղեկացվում է նաև իր կողմից տրամադրված հավելյալ էլեկտրոնային փոստի հասցեով: Ֆիզիկական անձը համարվում է պատշաճ ծանուցված պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելու օրվանից՝ անկախ իր կողմից տրամադրված հավելյալ էլեկտրոնային փոստի հասցեով ստացված տեղեկացումից, եթե այդպիսին առկա է:

«Կլիմայի մասին» օրենք և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Կլիմայի մասին օրենքը կարգավորելու է Հայաստանի Հանրապետությունում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության քաղաքականությունների մշակման, իրականացման, դրանց համակարգման գործընթացների կազմակերպումը, ինչպես նաև կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականության ոլորտներում Հայաստանի Հանրապետության, մարզպետների, համայնքների, ՀՀ և օտարերկրյա իրավաբանական անձանց հաշվառված բոլոր առանձնացված ստորաբաժանումների և ֆիզիկական անձանց միջև հարաբերությունները:
- Նախագծով կարգավորվում է նաև կլիմայական քաղաքականության մշակման և իրականացման ոլորտում լիազոր մարմնի, ինչպես նաև պետական կառավարման համակարգի այլ մարմինների լիազորությունները: Կազմավորվելու է նաև Կլիմայի փոփոխության հարցերով խորհուրդ, որի իրավասությունները նույնպես սահմանվում են օրենքով:
- Սահմանվում է նաև Կլիմայական քաղաքականության իրականացման կարգավորիչ գործիքակազմը, որը ներառում է՝
 - Ջերմոցային գազերի արտանետումների թույլտվությունը.
 - ածխածնի գնագոյացման գործիքները.
 - Ջերմոցային գազեր արտանետող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ջերմոցային գազերի հաշվառումն ու հրապարակումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է ամրագրել վերաքննիչ բողոքները գրավոր ընթացակարգով քննելու ընդհանուր օրենսդրական կանխավարկած՝ սահմանելով այդ մասին վերաքննիչ դատարանի կողմից որոշում կայացնելու պահը և վերաքննիչ բողոքարկման ընթացքում ապացույցներ հետազոտելու միջնորդություն և վերաքննիչ բողոքի քննության ընթացքում բողոքի սահմաններից ի շահ մեղադրյալի դուրս գալու դեպքերում բանավոր ընթացակարգով բողոքների քննության առանձնահատկությունները:
- Այս փոփոխության նպատակն է բեռնաթափել դատական ծանրաբեռնվածությունը և ապահովել գործերի քննության ողջամիտ ժամկետները:

«Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի մասին» օրենքում լրացում կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծի ընդունման արդյունքում նորմատիվ իրավական հիմք կստեղծվի «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներով և որոշումներով սահմանված արդարացի փոխհատուցման գումարի վճարման համար անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու և վճարումն իրականացնելու կարգը սահմանելու մասին» կառավարության որոշման նախագծի ընդունման համար, որով կապահովվի Եվրոպական դատարանի վճիռներով և որոշումներով սահմանված արդարացի փոխհատուցման գումարի վճարման գործընթացի պատշաճ իրականացումը:

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով նախատեսվում է վերանայել «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» 2001 թվականի հունիսի 24-ի ՀՕ-200 օրենքը, և հունվարի 27-ը սահմանել որպես Հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի օր՝ ոչ աշխատանքային օր:

«Արհեստակցական միությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով), «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծի ընդունմամբ կվերացվի Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների համար արհեստակցական կազմակերպության մասնակից լինելու բացարձակ արգելքը և կապահովվի «Արհեստակցական միությունների մասին» և «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների իրավակարգավորումների համապատասխանեցումը Սահմանադրական դատարանի 11.04.2023 թվականի ՍԴՈ-1683 որոշմանը:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով), «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծերի ընդունումը պայմանավորված է պետական սահմանի ցամաքային անցման կետերում տրանսպորտային միջոցների մուտքի ժամանակ հարկերի ու վճարների գանձման արդյունքում առաջացող կուտակումների նվազեցման և որոշակի դեպքերում ճանապարհային հարկի վճարումից ազատման արտոնություն սահմանելու անհրաժեշտությամբ:
- Մասնավորապես, առաջարկվում է հետաձգել պետական սահմանի ցամաքային անցման կետերում վճարվող բնապահպանական հարկի, ճանապարհային հարկի և պետական տուրքի վճարումները: Նախատեսվում է բնապահպանական հարկի վճարման ժամկետ սահմանել մինչև ավտոտրանսպորտային միջոցների ՀՀ մուտք գործելու օրվան հաջորդող 15-րդ օրը ներառյալ, իսկ մինչև նշված ժամկետը ՀՀ տարածքից ելքի դեպքում՝ մինչև ՀՀ տարածքից ելքը: Իսկ ճանապարհային հարկի վճարման ժամկետ սահմանվում է մինչև ավտոտրանսպորտային միջոցների ՀՀ մուտք գործելու օրվան հաջորդող 15-րդ օրը ներառյալ, իսկ մինչև նշված ժամկետը ՀՀ տարածքից ելքի դեպքում՝ մինչև ՀՀ տարածքից ելքը: Նաև, ՀՀ-ում չգրանցված բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների ՀՀ տարածքից ելքը անանցանելիությամբ պայմանավորված անհնար լինելու դեպքում հարկ վճարողներն ազատվում են համապատասխան ժամանակահատվածի համար ճանապարհային հարկից:

Ստորև ներկայացված նախագծերը ընդունվել են Երկրորդ ընթերցմամբ:

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկվում է «Պետական տուրքի մասին» օրենքի 19.6-րդ հոդվածով սահմանված՝ լիցենզիայի տրամադրման պետական տուրքը բազային տուրքի 29-ապատիկի փոխարեն սահմանել 55-ապատիկի չափով, ինչը կհավասարակշռի ամրանների ներքին շուկայում ներմուծվող և արտադրվող ամրանների մրցակցային պայմանները և կստադի բարենպաստ պայմաններ առողջ մրցակցության համար:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով), Վարչական իրավասխատուների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում սահմանվել է սահմանային գետերի հունից գետավազի արդյունահանման արգելք: Վարչական իրավասխատուների վերաբերյալ օրենսգրքով նախատեսվել է ընդերքօգտագործողի կողմից գետի հունից ավազի արդյունահանման դեպքում վարչական պատասխանատվության բավականին բարձր սահմանաչափ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհազարապատիկի չափով:
- Ընդերքօգտագործողի կողմից գետի հունից ավազի արդյունահանման դեպքը ընդերքօգտագործման իրավունքի գործողության ամբողջ ժամկետում կրկնվելու դեպքում՝ հիմք ընդունելով բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի միջնորդագիրը՝ նախատեսվել է ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում:

Ռիելթորական գործունեության մասին օրենք և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Օրենսդրական փաթեթի նախագիծը նպատակ ունի սահմանել հստակ և միասնական կարգավորումներ ռիելթորական ոլորտում:
- Սահմանվում է ռիելթորական ծառայությունների շրջանակը, որը ներառում է անշարժ գույքի և դրա նկատմամբ առկա գույքային իրավունքների օտարման, վարձակալության հետ կապված գործարքների կնքման համար իրականացվող միջնորդավորված ծառայությունները, ինչպես նաև անշարժ գույքի և դրա նկատմամբ առկա գույքային իրավունքների աճուրդների և մրցույթների կազմակերպումը, անշարժ գույքի կառավարումը:
- Նախատեսվում են ռիելթորական, անշարժ գույքի կառավարման ծառայությունների մատուցման պայմանագրի ձևին ներկայացվող պահանջները և պայմանագրի էական պայմանները:
- Ռիելթորական գործունեությամբ կարող են զբաղվել միայն օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից հաշվառված ռիելթորները և կազմակերպությունները:
- Որպես ռիելթորական գործունեության տեսակ նախատեսվել է նաև անշարժ գույքի կառավարումը (property management), որը ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից առաջարկվող ծառայություն է՝ բնակելի, հասարակական, արդյունաբերական և այլ անշարժ գույքերի առօրյա կառավարման համար:
- Ռիելթորական գործունեության ոլորտում առաջարկվող փոփոխություններից ակնկալվող արդյունքներն են.
 1. ռիելթորական գործունեության նորմատիվ իրավական բազայի ձևավորումը և կիրառումը,
 2. ռիելթորների որակավորման և վերաորակավորման ընթացակարգերի մշակումը,
 3. որակավորված ռիելթորների մասնագիտական շահերի պաշտպանությունը,
 4. անշարժ գույքի շուկայի մասնակիցների իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ներդրման և կիրառման ապահովումը,
 5. ռիելթորական գործունեության ոլորտում պատասխանատվության սահմանումը:

E-DRAFT **հարթակում հանրային քննարկման դրված նախագծեր**

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է կատարել փոփոխություններ ու հստակեցումներ Հարկային օրենսգրքում, որպեսզի լուծվեն կիրառման ընթացքում առաջացած պրակտիկ խնդիրները: Մասնավորապես՝ ընդլայնվում է գործարքների ճշգրտման և ապրանքների վերադարձի հնարավորությունը, վերանայվում է, թե երբ և ինչպես են ԱԱՀ-ի ու ակցիզային հարկի փոփոխությունները արտացոլվում միասնական հաշվարկում, հստակեցվում է գյուղատնտեսական արտադրանք արտադրող հարկ վճարողների ԱԱՀ կարգավիճակը, ոչ ռեզիդենտ (մշտական հաստատություն չունեցող) կազմակերպությունների ԱԱՀ պարտավորությունների հաշվարկման, հաշվետվության և վճարման կանոնները, ինչպես նաև ԱԱՀ վճարողների հաշվառման ու հաշվառումից հանելու կարգը:
- Միաժամանակ կրթության և զբոսաշրջության ոլորտներին առնչվող ԱԱՀ-ից ազատման ձևակերպումները բերվում են համապատասխան ոլորտային օրենքներին համահունչ դաշտ, իսկ մի շարք հին, գործնականում չկիրառվող կամ կրկնվող նորմեր հանվում կամ վերախմբագրվում են՝ օրենսգիրքը ավելի հստակ և միասնական դարձնելու համար:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով նախատեսվում են փոփոխություններ Հարկային օրենսգրքում՝ արտարժույթով գործարքների, շահութահարկի, եկամտային հարկի և որոշ ոլորտային առանձնահատկությունների հաշվարկման կանոնները ավելի հստակ ու միասնական դարձնելու համար: Մասնավորապես՝ վերանայվում է արտարժույթով արտահայտված գործարքների (մատակարարումներ, փոխանակում, կանխավճարներից առաջացած պարտքեր և այլն) հարկման բազայի ու արժեքի հաշվարկման օրը և կիրառվող փոխարժեքը, հստակեցվում է, որ սեփական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի օտարման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը չի համարվում եկամուտ, ներկայացուցչական ծախսերի նվազեցման սահմանը դրվում է մինչև համախառն եկամտի 0,5% (բայց ոչ ավելի, քան 5 մլն դրամ), իսկ դրոշմավորման ենթակա կաթնամթերքի որակական կորուստների նվազեցման շեմը բարձրացվում է մինչև 2%:

«Չինաստանի Ժողովրդական հանրապետության ծագում ունեցող ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3206 11 000 0 ծածկագրին դասվող չոր նյութի վերահաշվարկով 80 զանգվ.% կամ ավելի տիտանի երկօքսիդ պարունակող գունանյութերի և պատրաստուկների՝ առանց հակազնագցման տուրքի վճարման Հայաստանի հանրապետության տարածք ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» որոշման նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով նախատեսվում է, որ Չինական ծագման, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3206 11 000 0 ծածկագրով, տիտանի երկօքսիդի բարձր պարունակությամբ գունանյութերը և պատրաստուկները կարող են ներմուծվել Հայաստան առանց հակազնագցման տուրքի՝ տարեկան մինչև 250 տոննա ծավալով (բացառությամբ ԵՏՀ որոշման 2-րդ հավելվածում նշված տեսակների):
- Միաժամանակ հակազնագցման տուրքը չի գանձվում նաև որոշակի արտադրողների կողմից պատրաստված տիտանի երկօքսիդի նկատմամբ, եթե ներկայացվում է այդ արտադրողի հատուկ հավաստագիրը: Պետական եկամուտների կոմիտեն նշանակվում է լիազոր մարմին, սահմանվում է արտոնության կիրառման ընթացակարգը, իսկ արտոնությունը գործում է 5 տարի և տարածվում է նաև 2025 թվականի նոյեմբերի 16-ից ներմուծված համապատասխան ապրանքների վրա:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծեր (հասանելի հետևյալ հղումով)

- ՎԻՎՕ Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելու համար նախատեսված տուգանքը բարձրացվում է՝ դարձնելով այն նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկ:
- Քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածը շարադրվում է նոր խմբագրությամբ. քրեական պատասխանատվություն է սահմանվում (տրանսպորտային միջոց վարելու իրավունք չունեցող անձի) մեքենա վարելու համար այն դեպքում, երբ նույն արարքի համար արդեն կա վարչական ակտ վերջին 1 տարվա ընթացքում, ինչպես նաև վարելու իրավունքից զրկման/կասեցման մասին վարչական ակտը չկատարելու, հարբած վիճակում անելու, կամ սթափության զննությունից հրաժարվելու/խուսափելու դեպքում:

Եկամտային հարկի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) հայտարարագրման ոչ ենթակա նվազեցվող (չհարկվող) եկամուտների տեսակներ կամ շեմեր սահմանելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի N 1067-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծերի փաթեթով լրացվում է Կառավարության N 1067-Ն որոշման մեջ՝ սահմանելով, որ սոցիալական ծախսերի վերադարձ ստանալու համար ներկայացվող եկամտային հարկի տարեկան հաշվարկները, հայտարարագրերը և կից փաստաթղթերը պետք է էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված լինեն. այս պահանջը տարածվում է 2024թ. և հետագա հաշվետու տարիների համար ներկայացվող հայտարարագրերի վրա:
- Ինչպես նաև, կառավարությունն առաջին անգամ սահմանում է, թե որ տեսակի նվազեցվող (չհարկվող) եկամուտները և ինչ շեմերի չափով կարող են չհայտարարվել եկամտային հարկի տարեկան հաշվարկում (օր.՝ գործուղման կամ փոխհատուցման որոշ վճարներ, փոքր արժեքի մրցանակներ և շահումներ, որոշ նվիրատվություններ, ժառանգություն, վարկեր, գույքի օտարումից ստացված որոշ եկամուտներ և այլն). դրանք կարող են կամ չհայտարարվել, կամ կամավոր հայտարարվել, իսկ շեմը գերազանցելու դեպքում հայտարարագրվում է արդեն ամբողջ գումարը:

Պետության կողմից արհեստական բանականության ոլորտում բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսներին հասանելիության ապահովման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով նախատեսվում է արհեստական բանականության ոլորտում բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսներին (HPC – CPU, GPU, RAM, storage) անվճար հասանելիություն ապահովելու պետական աջակցության ծրագիրը. ծրագրի իրականացուցիչ է նշանակվում Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, իսկ աջակցությունը տրամադրվում է սուբսիդիայի միջոցով՝ «Amazon Web Services (AWS)»-ի հետ կնքվող պայմանագրի հիման վրա:
- Դիմել կարող են ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերեր և կազմակերպություններ, որոնք ԱԲ ոլորտի նախագծերի համար հայտ են ներկայացնում ԱԲ վիրտուալ ինստիտուտի հարթակի միջոցով. հաստատված հայտերի դեպքում պետությունը 100%-ով փոխհատուցում է օգտագործված ռեսուրսների արժեքը՝ պայմանագրով սահմանված ընդհանուր սահմանաչափի և 2026 թ-ի բյուջեի համար առավելագույնը 400 մլն դրամ սուբսիդիայի շրջանակում:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծերի փաթեթով կսահմանվի «մոլորության մեջ գցող գովազդի» և համեմատություններ պարունակող գովազդի ազդեցությունը և թե ինչ պայմանների պահպանման դեպքում է թույլատրելի մրցակցի հետ համեմատող գովազդը:
- Նաև, վերանայվում է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքը՝ ներդնելով նոր կարգավորումներ՝ մասնավորապես սահմանելով ապրանքի համապատասխանության, թվային տարբերով ապրանքների թարմացումների, երաշխիքային նվազագույն 2 տարվա ժամկետի, անարդար պայմանների արգելքի, ինչպես նաև հեռակա ու «շենքից դուրս» պայմանագրերի դեպքում սպառողի 14-օրյա անհիմն հրաժարվելու իրավունքի, նախնական տեղեկացման ու գումարների վերադարձի կանոններ:

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով ուժը կորցրած է ճանաչվում պահեստային դատավորի ինստիտուտն ամրագրող նորմը, ներդրվում է ինստիտուտ, որով դատավորի փոխարինումից հետո գործը կարող է շարունակվել ընդհատված պահից, եթե նոր դատավորը, կողմերին լսելուց հետո, գտնում է, որ դատաքննությունը սկզբից սկսելու անհրաժեշտություն չկա, իսկ արդեն հետազոտված ապացույցները համարվում են հետազոտված, բացառությամբ այն ապացույցների, որոնց կրկին ուսումնասիրումը դատարանը կամ կողմերը անհրաժեշտ կհամարեն:

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծեր (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծերի փաթեթով նախատեսվում է, որ վերակազմակերպման փոխանցման ակտում կամ բաժանիչ հաշվեկշռում պետք է ոչ միայն ներառվեն բոլոր, այդ թվում՝ վիճարկվող պարտավորությունները, այլ նաև կարգավորվի, թե ում է անցնում այն գույքը, իրավունքները և պարտավորությունները, որոնք ծագում, փոփոխվում կամ դադարում են այդ ակտի և հաշվեկշռի կազմման օրվանից մինչև ընկերության վերակազմակերպված համարվելու պահը: